

որուն վրայ յունարէն արձանագրութիւն մը կայ՝ զոր  
De Sanley ընդօրինակած է (P. E. F. 1896, էջ 325-6):

13. Կոյսի մը աւանդութիւնը. — Սաբայի վան-  
քին վանականներէն մին որ նկարագրած է 614ին  
Պարսից կողմէն Ս. Քաղաքին վրայ գործադրուած  
խժոժութեանց մասին, կը յիշէ սրտառուչ գրուագ մը  
որ կը վերաբերի Զիթենեաց լերան կուսանաց մէկ  
վանքին. «Վանք մը կար, կը գրէ, Զիթենեաց լերան  
մօտ, Պարսիկները հոն մտան և անկէ զուրս հանեցին  
չորս հարիւր կոյսեր և զանոնք բաժնեցին իրենց մէջ,  
և սկսան անառակութեան: Երբ երիտասարդ պարսիկ  
մը մօտեցաւ կոյսի մը, վերջինս ըսաւ անոր. «Ո՞վ ե-  
րիտասարդ, մի՛ գպչիր իմ կուսութեանս, և ես քեզ  
պիտի տամ իւզ մը՝ որ օգտակար ըլլայ քեզ պատե-  
րազմի ժամանակ, այն ամէն տեղ՝ որ այս իւզով  
չփես, սուրը պիտի չկրնայ հետք մը թողուլ»: Երի-  
տասարդը հաւանեցաւ առնել այս իւզը, կուսին փա-  
փաքանաց գոհացում տալու համար: Այն ատեն կոյսը  
ըսաւ անոր. «Իւզով չփէ պարանոցդ, և թող ինձ որ  
սրով քեզ զարնեմ, որպէս զի գիտնաս իմ խօսքերուն  
ստուգութիւնը». «Ոչ, ըսաւ ան, չփէ քուկլինդ»: Ահա  
ինչ որ կ'ուզէր կոյսը: Ան նախամեծար կը համարէր  
մեռնիլ քան թէ կորսնցնել իր անմեղութիւնը: Վեր-  
ջապէս երիտասարդը սուրը առաւ, զարկաւ անոր, և  
տեսնելով որ գլուխը գետին ինկաւ, ըսաւ. «Այս  
կոյսը աւելի կը սիրէր իր հոգին եւ նախամեծար կը  
համարէր մարտիրոսութեան պսակը»: Միւս կոյսերը  
որ հոն կը գտնուէին, իմանալով իր գործը՝ անոր նը-  
մանեցան, մահուան մատնուեցան և ընդունեցին մար-  
տիրոսութիւնը» (Bar. gr. էջ 140):